ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ք.Աշտարակ 2025թ. օգոստոսի 13 -ին, N298-Ա

ԼՈՒՍԻՆԵ ԱՐԱՄԱՅԻՍԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԲՅՈՒՐԱԿԱՆԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, 265-րդ հոդվածի 1.1-րդ և 3-րդ մասերով և հիմք ընունելով թիվ ԱՐԱԴ/0468/02/24 քաղաքացիական գործով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2024թ-ի հոկտեմբերի 7-ի վճիռը և թիվ ԱՐԱԴ/0468/02/24 քաղաքացիական գործով Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2025թ-ի հունիսի 13-ի որոշումը՝ 07.10.2024 թվականի վճիռն անփոփոխ թողնելու մասին՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Լուսինե Արամայիսի Մկրտչյանին վերականգնել ՀՀ Արագածոտնի մարզի «Բյուրականի Հովի. Թումանյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում՝ վերականգնված համարելով 2022թ-ի մարտի 4-ին նրա հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:

2. Լուսինե Արամայիսի Մկրտչյանին վճարել միջին աշխատավարձ հարկադիր պարապուրդի ողջ ժամանակահատվածի համար՝ սկսած 17.05.2024թ. մինչև աշխատանքում վերականգնվելու օրը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման մասին Լ. Մկրտչյանին պատշաճ կարգով իրազեկելու պահից:

8/13/2025

X

VERIFIED OCSP 8/13/2025 14:29:32 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս.ՄՈՎՍԻՍՅԱՆ